ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՖԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԵԼԵՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կուսակցության գործունեության գլխավոր ուղղություններից մեկը ռազմաճակատի և թիկունքի միջև կապի ամրապնդումն էր։ Ռազմաճակատին ցույց տրվող շեֆական օգնությունը ներառնում էր մարտիկների շրջանում դաստիարակչական և կուլտուր-մասսայական աշխատանքի անցկացումը, պաշտպանության ֆոնդի համար միջոցների հավաքման կազմակերպումը, ճակատայիններին համար նվերների և տաք հագուստների ուղարկումը։ Այդ աշխատանքում մեծ տեղ էր հատկացվում կարմիր բանակի վիրավոր մարտիկների ու սպաների բժշկական սպասարկման ճիշտ կազմակերպմանը։ Այդ բոլոր միջոցառումների հաջող անցկացման հիմքը դարձավ սովետական մարդկանց հայրենասիրությունը։

Ռազմաճակատի և թիկունքի միասնության ամրապնդման ուղղությամբ կատարվող աշխատանքը սկսվեց պատերազմի հենց առաջին օրերից։ Պատերազմի ժամանակաշրջանի արդեն ամենաառաջին փաստաթղթում՝ սովետական կառավարության հայտարարության մեջ, վստահություն էր հայտնվում, որ «մեր ամբողջ բնակչությունը՝ բոլոր բանվորները, գյուղացիները և մտավորականությունը պատշաճ գիտակցությամբ կվերաբերվեն իրենց պարտականություններին, իրենց աշխատանքին»[1]։ Իսկ ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՍ Ժողկոմխորհի 1941 թ. հունիսի 29-ի դիրեկտիվում հստակորեն սահմանվում էր բոլշևիկների խնդիրը՝ «ամբողջ ժողովրդին համախմբել կոմունիստական կուսակցության շուրջը, սովետական կառավարության շուրջը՝ կարմիր բանակին անձնազոհ կերպով աջակցելու համար, հաղթանակի համար»[2]։ Ղեկավարվելով այս պահանջներով, ՀԿ(բ)Կ Կենտկոմը ռազմաճակատին լայն օգնություն ցույց տալու ուղղությամբ միջոցներ ձեռնարկեց։

Առաջին հերթին որոշվեցին ճակատայինների շրջանում աշխատավորների քաղմասսայական և ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի խնդիրները։ Այդ առումով մեծ նշանակություն ունեցավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը՝ հայ մարտիկների շրջանում տարվող կուսակցական-քաղաքական աշխատանքի գործում հանրապետության կուսակցական և տնտեսական մարմինների կողմից Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդին և քաղվարչությանն օգնելու մասին։ Որոշման մեջ մասնավորապես մատնա-

---

[1] «Советская Армения в годы Великой Отечественной войны». Сборник документов и материалов, Ереван, 1975, էջ 18։

[2] Նույն տեղում, էջ 24։

նշվում էր ռազմաճակատը քաղաքական գրականությամբ և հայերեն մամուլով ապահովելու, ինչպես նաև դասախոսներ և պրոպագանդիստներ ռազմաճակատ ուղարկելու անհրաժեշտությունը[3]։ Ճակատային թերթերի համար սկսեցին հրատարակվել հատուկ բյուլետեններ, «Սովետական Հայաստան» և «Կոմունիստ» թերթերի հատուկ համարներ։

Հայ կարմիրբանակայինների շրջանում դաստիարակչական աշխատանքը բարելավելու համար կարմիր բանակի գլխավոր քաղվարչության պահանջով ռազմաճակատ էր ուղարկվում հայերեն լույս տեսնող հանրապետական թերթերի, քաղաքական ու գեղարվեստական գրականության տպաքանակի 5—10%-ը[4]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Հայ ռազմիկների շրջանում կապը ուժեղացնելու և կուլտուր-դաստիարակչական աշխատանքի վերաբերյալ միջոցառումների մասին» որոշման մեջ հանրապետության պետհրատին հատուկ առաջադրանք դրվեց կարմիր բանակի ագիտատորների ու ռազմիկների համար կազմակերպել գրքույկների հրատարակում հետևյալ թեմաներով՝ «Հայ ժողովրդի հերոսական ավանդույթները», «Հայ ժողովուրդը իր հայրենիքի համար մղված պայքարում», «Հայաստանի աշխատավորները Հայրենական մեծ պատերազմում»։ Բացի այդ, պետհրատը պետք է կարմիր բանակի գլխավոր քաղվարչության տրամադրության տակ դներ երգերի ու ժողովրդական էպոսի հրատարակությունների 50%-ը[5]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի միջոցով իրականացվում էր հայկական միավորումների մարտիկների բաժանորդագրությունը թերթերին և ամսագրերին։ Բաժնում հաճախ էին պահանջարկներ ստացվում հայերեն թերթեր և ամսագրեր ուղարկելու մասին։ Դրանք ստանում էին սևծովյան նավատորմի քաղվարչությունը, 89-րդ, 408-րդ և 409-րդ հայկական դիվիզիաները[6]։

1943 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջարկությամբ Հայաստանի հեռագրական գործակալությունն ավելացրեց ճակատային հայկական մամուլի համար թողարկվող հատուկ բյուլետենի պարբերականությունը։ Պատերազմի տարիներին բանակային թերթերին մեծ օգնություն էին ցույց տալիս հանրապետության գրողները, լրագրողներն ու կուսակցական աշխատողները։

Հայ մարտիկների շրջանում կուսակցական-քաղաքական աշխատանքը կազմակերպելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմը հաճախ զորամասերն էր ուղարկում կուսակցական աշխատողների և մտավորականության ներկայացուցիչների։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1942 թ. հունվարի 26-ի որոշմամբ Անդրկովկասյան ռազմաճակատի գործող բանակում կուսակցական-քաղաքական աշխատանք կատարելու համար մոբիլիզացվեցին 50 կոմունիստներ[7]։ 1942 թ. նախամայիսյան և մայիսյան օրերին 89-րդ հայկական դիվիզիայի զորամասերն ուղարկվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Սարգսյանը, Երևանի քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Զ. Գրիգորյանը և սննդարդյունաբերության ժողկոմ Գ. Արղումանյանը։ Մարտիկների հետ ունեցած հանդիպումների ժամանակ նրանք պատմում էին հանրապետության աշ-

---

3 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 1, ց. 30, ղ 832, թ. 1—3։

4 Նույն տեղում, ց. 31, գ. 25, թ. 108—109։

5 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 235։

6 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 294, թ. 79. 80, 87, գ. 299, թ. 12, 16, 17, 30, 38, 41։

7 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 122։

խատավորների կյանքի մասին, իսկ Զ. Գրիգորյանը դասախոսություններ կարդաց «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը» թեմայով[8]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հանձնարարությամբ հայկական դիվիզիաներն էին մեկնում նաև գրողները։ 1942 թ. մարտին Ղրիմի ռազմաճակատում եղել են Ն. Զարյանը, Գ. Աբովը և Սարմենը՝ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Մ. Պապյանի հետ միասին[9]։ Նույն ժամանակ գրողներ Ա. Վշտունին, Գ. Աբովը, Հ. Շիրազը, Ս. Տարոնցին և նկարիչներ Զիլինգարյանն ու Է. Իսաբեկյանն այցելեցին Անդրկովկասյան ռազմաճակատի հայկական միավորումները։ Նրանք ոչ միայն դասախոսություններ էին կարդում և զրույցներ անցկացնում, այլև օգնում էին ճակատային մամուլի աշխատանքին, ակնարկներ էին գրում ռազմիկների կյանքի մասին։

Գաղափարական աշխատանքում մեծ նշանակություն ուներ նամակագրությունը ռազմաճակատի և թիկունքի միջև։ «Ձեր նամակը հայրենիքի սրբազան պատվիրանն է մեզ համար։ Հանուն սովետական հայրենիքի, հանուն մայր Հայաստանի մենք չենք ափսոսա մեր կյանքը, թշնամու դեմ կմարտնչենք մինչև արյան վերջին կաթիլը»— գրում էին հայկական միավորումներից մեկի մարտիկները՝ ի պատասխան Հայաստանի գրողների նամակների[10]։

Ռազմաճակատի և թիկունքի միասնության ամրապնդմանը նպաստում էին նաև մարտիկների հանդիպումները հանրապետության աշխատավորների հետ։ 1942 թ. սեպտեմբեր—հոկտեմբերին Հայաստան գործուղվեց 76-րդ դիվիզիայի քաղաշխատող Հ. Քոչարը։ 1943 թ. մարտին հանրապետության աշխատավորների հյուրը եղավ փառաբանված օդաչու Ն. Ստեփանյանը։ Նույն թվականի ապրիլին Հայաստանի քաղաքներում և գյուղերում հանդիպումներ տեղի ունեցան Ստալինգրադի ճակատամարտի մասնակիցների հետ։ Ապրիլի 23-ին Երևանում տեղի ունեցավ միտինգ, որտեղ հանդես եկան Հ. Քոչարը, Ս. Խոպերիան, Ա. Ախունդովը։ Ողջույնի խոսքերով Ստալինգրադի ճակատամարտի մասնակիցներին դիմեցին ակադեմիկոս Հ. Օրբելին և բանաստեղծ Ն. Զարյանը[11]։ Հայաստանում եղան 89-րդ Թամանյան, 409-րդ Կիրովոգրադյան, 51-րդ գվարդիական դիվիզիաների մարտիկների պատվիրակությունները և ուրիշներ։

Կարմիր բանակին օգնություն ցույց տալու մյուս կարևոր ձևը շեֆությունն էր վիրավոր ռազմիկների նկատմամբ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ ուշադրություն էր դարձնում վիրավորների շրջանում կուլտուր-դաստիարակչական և քաղմասսայական աշխատանքի կազմակերպմանը։ Այդ նպատակով հոսպիտալներին ամրացվել էին շեֆական կազմակերպություններ։ Այդ հիմնարկությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունները պարտավորվել էին կազմակերպել ինչպես մարտիկներին ցույց տրվող նյութական օգնությունը, այնպես էլ կուլտուր-դաստիարակչական աշխատանքը նրանց շրջանում[12]։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կուսակցական կազմակերպության 1943 թ. կատարած աշխատանքի հաշվետվության մեջ նշված էին հոսպիտալ-

---

8 Նույն տեղում, էջ 152։

9 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 76, թ. 189։

10 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 456։

11 «Коммунист», 24.IV.1943.

12 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 42, թ. 62—63, ֆ. 526, ց. 1, գ. 6, թ. 54—55։

ներում տարվող քաղմասսայական աշխատանքի գործում ձեռք բերված հաջողությունները[13]։

Քաղմասսայական աշխատանքին զուգընթաց որոշակի նշանակություն ուներ ինչպես զորամասերի, այնպես էլ հոսպիտալների կուլտուրական սպասարկման կազմակերպումը։ Հայֆիլհարմոնիայի կոլեկտիվները հայկական զորամիավորումների շեֆերն էին։ 1941 թ. հուլիսից Հանրապետությունում սկսեցին ստեղծվել զորամասերի, զորակոչային կետերի ու հոսպիտալների սպասարկման բրիգադներ։ Միայն պատերազմի առաջին երկու ամսվա ընթացքում կազմակերպվեց 35 այդպիսի բրիգադ, որոնք բաղկացած էին թատրոնների, Հայֆիլհարմոնիայի, ռադիոկոմիտեի և մյուս ստեղծագործական կազմակերպությունների արտիստներից։ Սունդուկյանի անվան թատրոնի բրիգադները ղեկավարում էին Վ. Վաղարշյանը, Վ. Վարդանյանը, Հ. Ներսիսյանը, Վ. Աճեմյանը, Գ. Ջանիբեկյանը։ Մինչև օգոստոսի կեսերը նրանք 40-ից ավելի ներկայացումներ կազմակերպեցին[14]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը սիստեմատիկաբար լսում էր ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր արվեստի գործերի վարչության հաշվետվությունները՝ կուլտուրամասսայական աշխատանքի կազմակերպման գործում հոսպիտալներին ցույց տրվող օգնության մասին։ Հանրապետության կուսակցական կազմակերպությունները պետք է հոսպիտալները ապահովեին գրականությամբ ու թերթերով, վիրավորների համար կազմակերպեին դասախոսություններ և զեկուցումներ, համերգներ և կինոնկարների ցուցադրում։ Մեծ նշանակություն ուներ նաև հանրապետության կոմերիտականների ռազմաշեֆական աշխատանքը։ ՀԼԿԵՄ Կենտկոմը կոմերիտական կազմակերպություններից պահանջում էր հոսպիտալներին մշտական օգնություն ցույց տալ կուլտուր-լուսավորական աշխատանքի կազմակերպման գործում։ Այսպես, օրինակ, 1942 թ. ապրիլին ընդունվեց «Զինվորական հոսպիտալներում կոմերիտականների կուլտմասսայական աշխատանքի մասին» որոշումը, որտեղ առանձնապես ընդգծվում էր վիրավոր ռազմիկների համար քաղաքական և գեղարվեստական գրականության հավաքման անհրաժեշտությունը[15]։

Վիրավոր մարտիկների հաճախակի հյուրերն էին գիտությունների ակադեմիայի գիտական աշխատողները։ Ակադեմիայի ինստիտուտների կուսակցական կազմակերպությունները մեծ ուշադրություն էին դարձնում հոսպիտալներին ցույց տրվող շեֆական օգնության կազմակերպմանը, վիրավորների համար դասախոսությունների ու զրույցների անցկացմանը[16]։

Վիրավոր ռազմիկներին հաճախ էին այցելում թատերական արտիստների բրիգադները։ 1942 թ. նրանք մարտիկների առջև հանդես են եկել 500 համերգով, որոնց զգալի մասը հոսպիտալներում։ 1943 թ. մարտիկների համար տրվել է երկու հազարից ավելի, իսկ վիրավորների համար՝ հազարից ավելի համերգ։ Բայց մարտիկների կուլտուրական սպասարկումը դրանով չէր սահմանափակվում։ Արվեստի աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեն հոսպիտալներին էր ամրացնում ռեժիսյորների, կոմպոզիտորների, նկարիչների բրիգադներ՝ ինքնագործունեության խմբեր կազմակերպելու հա-

13 Նույն տեղում, ֆ. 427, ց. 1, գ. 13, թ. 4։

14 Նույն տեղում, ֆ. 1, ց. 30, գ. 278, թ. 102—104։

15 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 142։

16 ՄԼԻ արխիվ, ֆ. 427, ց. 1, գ. 13, թ. 4, գ. 15, թ. 12, ֆ. 2702, ց. 1, գ. 2, թ. 3։

մար։ 1943 թ. նոյեմբերի վերջին ռազմաշեֆական ակտիվի համաքաղաքային կոնֆերանսում արվեստի 160 աշխատողների հանձնվեցին պատվոգրեր[17]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի նախաձեռնությամբ հոսպիտալներում անց էին կացվում վիրավոր մարտիկի օրեր և շաբաթներ։ Վիրավորներին այցելում էին հանրապետության նկարիչներն ու գրողները, գիտնականները, արտիստները, կոմերիտականներն ու պիոներները։ Այլ միջոցառումների թվում կարելի է նշել վիրավոր մարտիկի կուլտուրական սպասարկման օրվա անցկացումը 1944 թ. փետրվարին։ Դրա կազմակերպմանը մասնակցեց արվեստի և գրականության 1143 աշխատող, այդ թվում 525 արտիստ, 15 կոմպոզիտոր, 14 ռեժիսյոր, 16 գրող, 68 ուսուցիչ և այլն։ Գրողները Ա. Իսահակյանի գլխավորությամբ ամբողջ օրն անցկացրին հոսպիտալներում[18]։

Ռազմաճակատի հետ թիկունքի կապն ամրապնդելու, մարտիկներին սխրանքների ոգեշնչելու համար մեծ նշանակություն ուներ ռազմաճակատում զորամասերի ու միավորումների կուլտուրական սպասարկման կազմակերպումը։ Պատերազմի բոլոր տարիներին հանրապետության ստեղծագործական կոլեկտիվները հայկական զորամասերի շեֆերն էին։ Ըստ որում, նրանց աշխատանքը գտնվում էր հանրապետության կոմկուսակցության ուշադրության կենտրոնում։ Մինչև 1942 թ. փետրվարը Հայֆիլհարմոնիայի կոլեկտիվները ենթաշեֆ զորամասերում տվել էին 382 համերգ[19]։ Պետական ջազը, արվեստի վաստակավոր գործիչ Ա. Այվազյանի ղեկավարությամբ, 1943 թ. մարտին 45 համերգ է տվել Անդրկովկասյան ռազմաճակատի մարտիկների համար։ Ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սորոկինը ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած նամակում գրել է, որ ռազմիկներն ու հրամանատարները հիացմունքով ընդունեցին «համերգների գաղափարապես հագեցված, հրատապ, վարպետորեն կատարվող ծրագիրը»[20]։ Նույն ժամանակ նվագախումբը եղավ զորքերի սևծովյան խմբի մարտիկների մոտ, որոնց համար տվեց 22 համերգ։ Ռազմաճակատում շարունակ ելույթներ էր ունենում ժողովրդական երգի ու պարի անսամբլը, որի ղեկավարն էր Թ. Ալթունյանը։ Անսամբլը բաղկացած էր 28 հոգուց, որոնց մեծ մասը կանայք էին։ 1943 թ. անսամբլը երեք ամիս շարունակ հանդես եկավ մերձճակատային գոտում և Հյուսիսային Կովկասի ազատագրված քաղաքներում։ 1943 թ. զորամասերում ելույթ են ունեցել 400 բրիգադներ, որոնք տվել են 2000 համերգ[21]։

Գրեթե ամենուրեք, ուր հայրենիքի համար մարտնչում էին հայ ռազմիկները, լինում էին հայ արտիստները։ Ընդ որում, հատկանշական է, որ ռազմաճակատում արտիստների գտնվելը ոչ միայն ամրապնդում էր ռազմիկների մարտական ոգին, այլև «բարձրացնում էր կադրերի գաղափարական աճը... նրանց մեջ ուժեղացնում էր մեր մարտիկների, հայրենիքի հերոս պաշտպանների առջև կրկին ու կրկին հանդես գալու անզուսպ ձգտումը»[22]։

Պատերազմի տարիները դարձան ոչ միայն արվեստի նոր վերելքի, այլև

---

17 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 265։

18 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 49, թ. 8—19։

19 «Коммунист», 7.II.1942.

20 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 227։

21 Նույն տեղում, էջ 264։

22 Նույն տեղում։

մասսաների հետ նրա է՛լ ավելի մերձեցման ժամանակաշրջան, երբ ամեն մի նոր ստեղծագործություն անմիջականորեն ստուգման էր ենթարկվում մասսաների մեջ և գտնում էր նրանց աշխույժ արձագանքը։

Շնորհիվ այն բանի, որ Հայաստանի կոմկուսակցությունը հասավ պատերազմի ժամանակ մասսաների կողմից իրենց առջև գրված խնդիրների գիտակցմանը, հնարավոր դարձավ ստեղծել մի շարք ֆոնդեր, որոնք անգնահատելի օգնություն էին ցույց տալիս ռազմաճակատին, մեր երկրի ամբողջ ռազմական էկոնոմիկային։ Պաշտպանության ֆոնդին միջոցներ էին տրամադրում բանվորները, ծառայողները, գիտնականներն ու ուսուցիչները։ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կոլեկտիվը պատերազմական ժամանակի կուսակցական առաջին ժողովներից մեկում քննարկեց պաշտպանության ֆոնդի համար միջոցներ հավաքելու հարցը և հենց ժողովի ժամանակ հավաքեց 3000 ռուբլի։ Հայկական ՍՍՀ ժողկոմխորհին առընթեր արվեստի գործերի վարչության կոլեկտիվը պարտավորվեց ամեն ամիս մեկ օրվա աշխատավարձը տալ պաշտպանության ֆոնդին։ Նույնպիսի պարտավորություն ստանձնեցին Սունդուկյանի անվան թատրոնի դերասանները[23]։

Պաշտպանության ֆոնդի ստեղծման գաղափարը ջերմորեն պաշտպանեցին գրողները։ Նրանք որոշում ընդունեցին պաշտպանության ֆոնդին հանձնել հոնորարի և աշխատավարձի մի մասը։ Ն. Զարյանը և Հ. Շիրազը պաշտպանության ֆոնդին նվիրեցին իրենց հայրենասիրական բանաստեղծությունների ժողովածուների հոնորարները[24]։ Նման պարտավորություններ վերցրեցին նաև Լենինականի երիտասարդ գրողներ Լ. Միքայելյանը, Ա. Գրիգորյանը, Վ. Պետյանը[25]։ Կարելի է անհամար օրինակներ բերել այն հայրենասիրական վերելքի, որը հանրապետության աշխատողներին մղում էր մասնակցելու պաշտպանության ֆոնդի համար միջոցների հավաքմանը։ Միայն 1941 թ. օգոստոսի սկզբից մինչև սեպտեմբերի 20-ը երկրի պաշտպանության ֆոնդ է մուծվել 23085500 ռուբլի, 469 դրամ ոսկի, 54 կգ արծաթ, 4198 գ. միս. 35 գ. բուրդ, 6640 կգ գունավոր մետաղ[26]։ Իսկ ընդամենը պատերազմի տարիներին Հայաստանում պաշտպանության և կարմիր բանակի ֆոնդի համար հավաքվել է 131027000 ռուբլի[27]։

Պատերազմի առաջին օրերից հանրապետության աշխատողները մեծ ոգևորությամբ տաք հագուստ էին հավաքում կարմիր բանակի մարտիկների համար։ 1941 թ. սեպտեմբերի 5-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «Կարմիր բանակի համար տաք հագուստ և սպիտակեղեն հավաքելու մասին»։ Սեպտեմբերի 8-ին համանման որոշում ընդունեց ՀԿ(բ)Կ Կենտկոմը։ Սեպտեմբերի 17-ին այդ որոշումը քննարկեց բժշկական ինստիտուտի կուսակցական կազմակերպությունը։ Ժողովը կազմակերպության բոլոր անդամներից պահանջեց ակտիվորեն մասնակցել այդ պետական կարևոր առաջադրանքի կատարմանը[28]։ Այդպիսի որոշումներ ընդունեցին նաև հանրապետության մյուս կուսակցական կազմակերպությունները։ Կարմիր բանակի համար տաք

---

23 «Коммунист», 3.VIII.1941.

24 «Գրական թերթ», 10. VIII. 1941։

25 «Ավանդարդ», 12. VIII. 1941։

26 «Սովետական Հայաստան», 27. IX. 1941։

27 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 311։

28 ՄԼԻ արխիվ, ֆ. 103, ց. 1, գ. 29, թ. 41։

հագուստի հավաքման գծով 1941 թ. բոլոր առաջադրանքները գերակատարվեցին[29]։ Կուսակցության քաղկոմներն ու շրջկոմները սիստեմատիկաբար ստուգում էին բնակչության մեջ տաք հագուստի հավաքման հանձնաժողովների աշխատանքը, ձգտելով հասնել այն բանին, որ հայրենասիրական այդ գործին մասնակցեն բոլոր բանվորները, ծառայողներն ու մտավորականները[30]։ Պատերազմի տարիներին Հայաստանի աշխատավորները ռազմաճակատ են ուղարկել 1136000 հատ տաք հագուստ, 45 վագոն մթերք և 206323 անհատական ծանրոց[31]։

Կարմիր բանակի հզորության և մարտական պատրաստականության ամրապնդման ուղղությամբ կուսակցության և կառավարության բազմաթիվ առաջադրանքների կատարումն անհնարին կլիներ առանց սովետական բժիշկների հիրավի հերոսական գործունեության։ Պատերազմը էապես փոխեց երկրի բժշկական հիմնարկությունների գործունեության բնույթը։ Հայկական ՍՍՀ-ում, ինչպես և ամբողջ երկրում, պատերազմի առաջին օրերից այն աշխատանք ծավալվեց կարմիր բանակի վիրավոր մարտիկներին օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Հայաստանի բժիշկները ռազմաճակատներում անձնազոհ կերպով մարտնչում էին մարտիկների կյանքի համար։ Միայն 1941 թ. բանակ մեկնեցին բժշկական ինստիտուտի 44 դասախոս և 47 ուսանող։ Ընդ որում, նրանցից շատերը կամավորներ էին։ Պատերազմի բոլոր տարիներին կարմիր բանակը համալրվում էր Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտներով։ Ոչ ոք չէր կարող մարտիկից ավելի լավ որոշել զինվորական բժշկի աշխատանքի նշանակությունը։ Այդ առումով առանձնապես ուշագրավ է 89-րդ Թամանյան դիվիզիայի մարտիկների նամակը Երևանի բժշկական ինստիտուտի ուսանողներին և դասախոսներին։ Մարտիկները նշում էին, թե ինչպես անօրինակ արիությամբ ու հերոսությամբ էր մարտի գնում իրենց դիվիզիայի բուժսանգումարտակը։ Ռազմիկների սերն էին վայելում բժշկական ինստիտուտի շրջանավարտներ, զինվորական բժիշկներ Շ. Բաղդասարյանը, Բ. Մելքումյանը, Ս. Մարտիրոսյանը, վիրաբույժներ Խ. Մխիթարյանը, Գ. Մկրտչյանը և Ավագյանը։ Նամակի վերջում մարտիկները շնորհակալություն էին հայտնում բժշկական ինստիտուտի դասախոսներ Վ. Արծրունուն, Ա. Քեչեկին, Ա. Արեշյանին, Գ. Բունիաթյանին, Ա. Մելիք-Ադամյանին, Բ. Ֆանարջյանին, Ս. Շահրիմանյանին և մյուսներին՝ բարձրորակ և հայրենիքին նվիրված մասնագետներ պատրաստելու համար։ Մարտիկները գրում էին. «Համոզված եղեք, որ ձեր աշակերտների անունները, հայ ժողովրդի հերոս զավակների անունների հետ միասին, անջնջելի տառերով կգրվեն հայ ժողովրդի հերոսական պատմության ոսկե գրքում»[32]։

Լենինգրադի հեղափոխության թանգարանում պահվում է երիտասարդ բժշկուհի Ս. Լալայանի լուսանկարը և թշնամու արկի բեկորով ծակված նրա կուսակցական տոմսը։ Ս. Լալայանը 1941 թ. ավարտել է Լենինգրադի բժշկական ինստիտուտը և պատերազմի առաջին օրերից դարձել զինվորական բժիշկ։ Իր քրոջ՝ Ռուզաննայի հետ միասին նա մասնակցել է Պուլկովոյի, Շլի-

---

29 «Советская Армения в тоды Великой Отечественной войны», էջ 116։

30 Նույն տեղում, էջ 117։

31 Նույն տեղում, էջ 312։

32 ՄԼԻ արխիվ, ֆ. 103, ց. 1, գ. 36, թ. 3։

սելբուրգի, Ռազլիվի, Ստարայա Ռուսիայի մոտ մղված մարտերին, որի համար արժանացել է կառավարական պարգևների։ Կուսակցության մեջ ընդունվելիս իր դիմումի մեջ նա գրել է. «Խնդրում եմ ինձ ընդունել կուսակցության շարքերը, ցանկանում եմ մեռնել որպես կոմունիստ։ 1942 թ. ապրիլին «Ջա ռոդինու» թերթը նրա մասին գրել է. «Հիանալի է աշխատում երիտասարդ վիրաբույժ ընկ. Լալայանը։ Շատ շուտ տիրապետելով վիրաբույժի բարդ արվեստին, նա արդեն ինքնուրույն կերպով բարդ վիրահատություններ է կատարում։ Ընկ. Լալայանը փրկել է շատ մարտիկների ու հրամանատարների թանկարժեք կյանքը»։ Երիտասարդ կոմունիստուհու կերպարը վեր է հառնում նաև հարազատներին նրա գրած նամակից. «Քանի դեռ մեր ձեռքերը գործում են, ոտքերն անվնաս են, աչքերը տեսնում են, մենք պարտավոր ենք ծառայել հայրենիքին։ Մենք գոյություն ունենք հայրենիքի համար, և մինչև մեր կյանքի վերջը կծառայենք նրան»։ Ս. Լալայանը զոհվեց վիրահատման սեղանի մոտ, մինչև վերջին շունչը հավատարմորեն ծառայելով հայրենիքին[33]։

Առաջավոր գծերի բուժկետերում ռմբակոծության տակ ռազմիկների կյանքի համար անձնազոհաբար մարտնչում էին զինվորական վիրաբույժներ Պ. Սմբատյանն ու Ա. Գյոդակյանը։ «Նրա համար գոյություն չուներ ո՛չ ցերեկ, ո՛չ գիշեր մինչև առավելագույն պայմաններ չստեղծվեին վիրավորների համար»,— 46-րդ բանակի սանիտարական բաժնի պետ Ջեպելովը այսպես է գրել 2-րդ կարգի զինվորական բժիշկ Ռ. Ջանջուտովայի մասին, որը հոսպիտալի աշխատանքը հմտորեն ղեկավարելու համար պարգևատրվել է Կարմիր Աստղի շքանշանով[34]։ Կուսակցությունը բարձր է գնահատել զինվորական բժշկուհիներ Ն. Ավետիսյանի և Ա. Իգիթխանյանի ծառայությունները՝ նրանց պարգևատրելով «Խիզախության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով։ Հայրենիքի համար զոհվեց զինվորական բժշկուհի Դ. Նազարյանը[35]։

Հայ բժիշկները հիանալի էին աշխատում նաև հանրապետությունում։ 1941 թ. հուլիսի առաջին օրերից աշխատանքներ սկսվեցին հոսպիտալների բացման ուղղությամբ և հուլիսի 12-ին կազմակերպվեց 9 հոսպիտալ՝ 3200 տեղով։ Մինչև հուլիսի 19-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ Երևանի, Լենինականի, Կիրովականի հիվանդանոցների և տուբերկուլյոզային առողջարանի բազայի վրա բացվեցին հոսպիտալներ՝ 525 մահճակալով[36]։ 1941 թ. սեպտեմբերին Հայաստանի կոմկուսի Կենտկոմը որոշում ընդունեց «Կարմիր բանակի վիրավոր մարտիկների ու հրամանատարների բժշկական սպասարկումը բարելավելու և էվակուացիայի գործը կարգավորելու մասին» Պաշտպանության պետական կոմիտեի որոշումը իրականացնելու ուղղությամբ միջոցառումների մասին»։ Այդ որոշմանը համապատասխան հանրապետության առողջապահության ժողկոմատին առընթեր կազմակերպվեց էվակուացված հոսպիտալների ղեկավարման վարչություն։ Վարչության պետ նշանակվեց պրոֆեսոր Ա. Հակոբյանը։ Միաժամանակ կազմակերպվեց հիվանդ և վիրավոր մարտիկների ու հրամանատարների սպասարկման կոմիտե։ Այդ կազ-

33 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 312։
34 Նույն տեղում, էջ 454։
35 «Նամակներ փառքի և անմահության», Երևան, 1975, էջ 284։
36 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 74, թ. 12, 13, 24։

մակերպությունները գոյություն ունեցան մինչև 1946 թ. և կարևոր դեր խաղացին վիրավոր մարտիկների սպասարկման գործում։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պահանջով անցկացվեցին բժշկական աշխատողների ժողովներ, որտեղ քննարկվեցին բուժաշխատողների խնդիրները պատերազմի ժամանակաշրջանում։ Այսպես, Լենինականում տեղի ունեցած ժողովում «Բժշկական օգնությունը հազմաճակատում և թիկունքում» թեմայով զեկուցում կարդաց ՀՍՍՀ առողջապահության ժողկոմը[37]։

Հոսպիտալների աշխատանքն ընթանում էր հանրապետության գիտական ուժերի ակտիվ մասնակցությամբ։ Պատերազմի տարիներին Երևանի բժշկական ինստիտուտի բոլոր դասախոսներն ու ասիստենտներն աշխատում էին դինվորական հոսպիտալներում։ Նրանց մասնակցության շնորհիվ բուժումը տարվում էր ավելի կատարելագործված ու նոր մեթոդներով։ Հանրապետության գրեթե բոլոր հոսպիտալներում կային բուժական ֆիզկուլտուրայի կաբինետներ, կիրառվում էին պարաֆինաթերապիա և վերքերի բուժում ուլտրամանուշակագույն ճառագայթներով։ Ռենտգենոլոգ Զ. Մովսիսյանը անց էր կացնում վերքերի բուժում ռենտգենի միջոցով[38]։ Նեյրովիրաբուժական հոսպիտալում պրոֆեսորներ Ա. Հակոբյանի և Գ. Միրզոյանի ղեկավարությամբ կազմակերպվեց ջղաբաժանմունք՝ պերիֆերիկ ջղային համակարգի վնասվածքները բուժելու համար։ Պատերազմի հաշմանդամներին բուժելու համար բացվեց 150 մահճակալով վերականգնող վիրաբուժության հիվանդանոց և նրան կից պրոթեզային արհեստանոց։ Ժողտնտխորհի «Հայրենական պատերազմի հաշմանդամների սպասարկումը բարելավելու մասին» կարգադրության մեջ առողջապահության ժողկոմ Ա. Ճշմարիտյանին հանձնարարվում էր պրոթեզման կարիք ունեցող վիրավորներին տեղափոխել հատկապես առանձնացված հոսպիտալ[39]։

Բժշկական ինստիտուտի 13-րդ գիտական սեսիան նվիրված էր էվակուացված հոսպիտալների բժիշկների աշխատանքին։ Սեսիայում պրոֆեսոր Ռ. Յոլյանը հանդես եկավ վերքային վարակների ֆագոթերապիայի մասին զեկուցումով, իսկ պրոֆեսոր Գ. Միրզոյանը խոսեց նոր դեղամիջոցների հայտնաբերման մասին։ Մեծ նշանակություն ուներ Ռ. Յոլյանի աշխատությունը՝ անոթային կարերի հարցերի վերաբերյալ[40]։

Վիրավորներին բուժելու համար արդյունավետ կերպով օգտագործվում էին Հայաստանի առողջարանները։ 1942 թ. ապրիլին ՀՍՍՀ ժողկոմխորհը որոշում ընդունեց «Ջերմուկ» առողջարանի բացման մասին՝ պատերազմի հաշմանդամների բուժման համար։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տվեց այդ որոշմանը և առաջարկեց «ընդլայնել և առավելագույն չափով օգտագործել առողջարանի հնարավորությունները... որի համար ուղարկել գիտական աշխատողների բրիգադ»[41]։ Հանձնարարությունը կատարվեց, և 1944 թ. մայիսին բժշկական ինստիտուտի գիտական սեսիայում պրոֆեսոր Ա. Մելիք-Ադամյանը զեկուցեց «Ջերմուկ» առողջարանի ուսումնասիրման արդյունքների մասին։

---

37 «Советская Армения в годы Великой Отечественной войны» էջ 82—83։

38 ՄԼԻ արխիվ. ֆ. 1, ց. 30, գ. 277, թ. 34—35։

39 «Советская Армения в годы Великой Отечественной войны», էջ 140։

40 «Коммунист», 10.V.1944.

41 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 376, թ. 175։

Այսպիսով, կուսակցության ղեկավարությամբ Հանրապետությունում արվում էր հնարավոր ամեն բան վիրավոր մարտիկների լավագույն սպասարկման համար։ Այդ աշխատանքի հաջողությունների մասին են խոսում նաև հետևյալ թվերը։ 1942 թ. 8 ամսվա ընթացքում հոսպիտալներից դուրս է գրվել 14226 մարդ, որոնցից 4222-ը վերադարձել են զորամաս, 2223-ը ուղարկվել են առողջացողների գումարտակ, իսկ 3409 հոգու արձակուրդ է տրվել. այսինքն՝ դուրս գրվածների մոտ 70%-ը պիտանի է եղել բանակում հետագա ծառայության համար[42]։

Հայաստանում տեղաբաշխված էվակուացիոն հոսպիտալների աշխատանքը նշվել է ՍՍՀՄ առողջապահության ժողկոմատի կողմից։ Մի շարք հոսպիտալներ պարգևատրվեցին ժողկոմատի պատվոգրերով։ Դրանց թվում էր այն հոսպիտալը, որի պետն էր բժշկական ծառայության մայոր Վ. Ավագյանը։ Հաճախ մարտիկներից հոսպիտալների հասցեով նամակներ էին ստացվում։ Դրանցից մեկում ավագ լեյտենանտ Ա. Շլիցմանը գրում էր. «Մենք ձեր մեջ զգում էինք ոչ միայն բժիշկների, այլև ամենահարազատ և մտերիմ մարդկանց։ Ես հաճախ եմ իմ մարտիկներին պատմում, թե ինչքան հրաշալի մարդիկ կան մեր թիկունքում»[43]։

Հանրապետության բուժաշխատողներն այսպես էին կատարում զինվորական կարևորագույն առաջադրանքը՝ վերականգնում էին վիրավոր մարտիկների առողջությունը։ Պատերազմի հենց առաջին օրերին պրոֆեսոր Ռ. Յոլյանը ասել է. «Սովետական վիրաբույժները բոլոր ջանքերը կներդնեն մեր փառապանծ կարմիր բանակի վիրավոր, պանծալի մարտիկների կյանքը փրկելու համար»։ Ամբողջ պատերազմի ընթացքում Հայաստանի բժիշկները հավատարիմ մնացին այդ խոստմանը և պատվով կատարեցին այն։

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեր հանրապետության մտավորականությունը, ՀԿ(բ)Կ ղեկավարությամբ, դարձավ թիկունքի կարևորագույն խնդիրներից մեկի իրականացման՝ կարմիր բանակի ամրապնդման ակտիվ մասնակիցը։ Գրողները, բժիշկները, գիտնականները, արվեստի աշխատողները, ամեն մեկն իր հերթին և իր հնարավորությունների չափով ամրապնդում էին մարտիկների բարոյական ոգին և առողջությունը, նյութական մեծ աջակցություն էին ցույց տալիս կարմիր բանակը անհրաժեշտ ամեն ինչով ապահովելու համար։ Այդ գործում մեծ էր կոմունիստների դերը, որոնք «իրենց անձնական օրինակով, հերոսությամբ և արիությամբ բարձրացնում էին մասսաների մարտական ոգին, նրանց առաջնորդում էին սխրագործությունների, նրանց մեջ հաստատ համոզմունք ներշնչում, որ թշնամու նկատմամբ լիակատար հաղթանակ ձեռք կբերվի»[44]։

---

42 Նույն տեղում, ց. 30, գ. 277, թ. 36։

43 «Коммунист», 26.XI.1944.

44 ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը «1941—1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի կատարած հաղթանակի 30-ամյակի մասին» («Սովետական Հայաստան», 9. II. 1975)։

УЧАСТИЕ ИНТЕЛЛИГЕНЦИИ АРМЕНИИ В ШЕФСКОЙ РАБОТЕ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

ЕЛЕНА ВАРДАНЯН

Резюме

Шефская работа в период Великой Отечественной войны способствовала упрочению единства тыла и фронта. Шефская помощь фронту включила проведение трудяшимися тыла идеологической и культурно-массовой работы среди воинов и населения, организацию сбора средств в фонд обороны, кампаний по сбору подарков и теплых вещей для фронтовиков, содействие медицинскому обслуживанию раненых бойцов. Во всей этой многогранной работе активное участие приняла интеллигенция республики, внесшая свой достойный вклад в усиление единства фронта и тыла, в достижение победы над врагом.